ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1950 *Общественные науки*

Ա. Մնացականյան

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄՂԱԾ ՄԱՐՏԵՐԸ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ ԵՎ ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՄԱՐՏԵՐԻՆ

*Եվրոպայում իր աղտաագրական միսիան կատարելուց և գերմանաֆաշիստական զավթիչներին ջախջախելուց հետո Սովետական բանակները զենքը շուռ տվեցին ընդդեմ ճապոնական իմպերիալիզմի, որը սովետական ժողովրդի և առաջավոր մարդկության նույնպիսի ոխերիմ թշնամի էր, ինչպես գերմանական իմպերիալիզմը։ Ճապոնական իմպերիալիստներն անթիվ, անհամար փնասներ են պատճառել մեր հայրենիքի ժողովուրդներին և Արևելքի գաղութային ու կախյալ երկրների աշխատավորներին։*

*Այդ նրանք, ճապոնական իմպերիալիստները, օգտագործեցին ցարական կառավարության թուլությունը և 1904 թվականին Ռուսաստանից զավթեցին Հարավային Սախալինը, հաստատվեցին Կուրիլյան կղզիներում, փակեցին՝ դեպի Խաղաղ օվկիանոս Ռուսաստանի դուրս գալու ելքը։*

*Ճապոնական իմպերիալիստները ավելի մեծ կատաղությամբ լցվեցին դեպի մեր երկիրը, երբ 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի միջոցով տապալվեց կապիտալիստների իշխանությունը և հաստատվեց սովետական իշխանություն։*

*Ճապոնական իմպերիալիզմի իդեոլոգիան սամուրայների իդեոլոգիան է։ Ի՞նչ էին ներկայացնում իրենցից սամուրայները։ Ճապոնիայում սամուրայները նույնն էին, ինչ որ ֆաշիստները Գերմանիայում և ուրիշ երկրներում։ Սամուրայները Ճապոնիայում ստեղծեցին շատ սևհարյուրակային կազմակերպություններ, ինչպես, օրինակ, «Բոկուրյուկայ»-ը («Սև դրակոն»), որը հանդիսանում էր ճապոնական իմպերիալիզմի զավթողական քաղաքականության ակտիվ կիրառողը, լրտեսության կազմակերպողը, հարևան երկրները պրովոկատորներ ու դիվերսանտներ ուղարկողը։ Այդ կազմակերպությունը երկրի քաղաքական, զինվորական և ներքին տնտեսական ամբողջ ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել։*[1]

*«Սև դրակոն» կազմակերպությունը ճապոնական բանակի ու նավատորմի զինվորներին և երիտասարդությանը տասնյակ տարիներ դաստիարակում էր, այսպես կոչված, «սամուրայի պատվի օրենքով»։ Այդ «կոդեքսը» ճապոնացիներն անվանում են նաև «բուսիդո» (կամ «սամուրայների արահետ», «պատերազմի ճանապարհ»)։*

*Ճապոնական իմպերիալիստների ավազակային գաղափարախոսությունը պնդում էր, թե, «լինելով աստվածային ժողովուրդ», ճապոնացիներն աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ հանդիսանում են «ընտրյալների ժողովուրդ», որը կոչված է իրագործելու «Սինտո» կրոնի սկզբունքները։*[2]

---

[1] „Красная Звезда", *1945 թ., օգոստոսի 30։*
[2] „Красная Звезда", *1945 թ., օգոստոսի 30։*

Ճապոնական իմպերիալիզմի նվաճողական ծրագիրը և համաշխարհային տիրապետության ձգտելու ցնորամիտ, ծիծաղելի հավակնություններն ավելի բացահայտ լկտիությամբ ձևակերպեց Տանական 1927 թվականին հրապարակ բերված իր «Մեմորանդում»-ի մեջ։ Այդ ժամանակ ճապոնական պրեմիեր-մինիստր գեներալ Տանական ճապոնական կայսրին ուղղած «Մեմորանդում»-ի մեջ գրում էր.

«Աստվածային կանխատեսությունն ուղում է, որպեսզի ես օգնեմ ձերդ գերազանցությանը, Հեռավոր Արևելքում բաց անելու նոր դարաշրջան և ծավալելու ցամաքային նոր կայսրություն... որպեսզի գրավենք Չինաստանը, մենք պետք է նախ և առաջ գրավենք Մանջուրիան և Մոնղոլիան. որպեսզի գրավենք ամբողջ աշխարհը, մենք պետք է նախ և առաջ գրավենք Չինաստանը... Մեր տրամադրության տակ ունենալով Չինաստանի բոլոր ռեսուրսները, մենք կանցնենք Հնդկաստանի, Արշիպելագի, Փոքր Ասիայի, Կենտրոնական Ասիայի և նույնիսկ Եվրոպայի գրավմանը»։

Մեկ անգամ չէ, որ ճապոնական իմպերիալիստները փորձել են կատարել սամուրայների այդ ավազակային ծրագրերը։

Այդ նրանք, ճապոնական սամուրայները 1918 թվականին ամերիկյան և անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ դեսանտ հանեցին Սովետական Ռուսաստանի Հեռավոր-Արևելյան երկրամասը, օկուպացրին այն և բոնությունների ու գազանային ոճրագործությունների ռեժիմ էին կիրառում Հեռավոր Արևելքում։

Ճապոնական զավթիչները 1918 թ. 70 հազար զորք մտցրին Ռուսաստանի տերիտորիան, գնդակահարում էին հազարավոր բանվորների ու գյուղացիների, կողոպտում էին ռուս ժողովրդին։[1] Ճապոնական բարբարոսները ձերբակալեցին ռուս ժողովրդի անվեհեր զավակ Սերգեյ Լազոյին, կենդանի նրան շղթայակապ նետեցին շոգեքարշի հնոցը և այրեցին։[2]

Ճապոնական զավթիչները 1938 թվին հարձակվեցին մեր երկրի վրա Խասան լճի շրջանում, իսկ մեկ տարի հետո կրկնեցին նույնպիսի ավազակային հարձակում Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և ՍՍՌՄ-ի սահմանների վրա Խալխին Գյոլ գետի ափին։

Ճապոնական զավթիչները ջախջախվեցին Սովետական Բանակի հարվածների տակ և ետ շպրտվեցին մեր Հայրենիքի սահմաններից։ Ինչպես քաղաքացիական պատերազմի տարիներին, նաև 1938—1939 թվականներին Սովետական Բանակը լավ դաս տվեց «աշխարհը նվաճելու» հավակնություն ունեցող ճապոնական սամուրայներին, սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, իմպերիալիստական Ճապոնիայի կառավարողները չէին հրաժարվել իրենց հանցագործ մտադրություններից։

Երբ հիտլերյան զորքերը ներխուժեցին Սովետական Միության տերիտորիան, ճապոնական իմպերիալիստական կառավարությունը երկրում հայտարարեց մոբիլիզացիա և ամենաընտիր զորքերը մոտեցրեց սովետական սահմաններին։ Սամուրայներն օրեցօր սպասում էին Ստալինգրադի անկմանը, որպեսզի ներխուժեն սովետական Հեռավոր Արևելքը և մասնատեն մեր երկիրը։

---

[1] Документ по истории гражданской войны в СССР, т. I, стр. 189—190. ОГИЗ, 1940 год.

[2] „Сергей Лазо", Воспоминания и документы. ОГИЗ, 1938 год.

Ստալինգրադի տակ ֆաշիստական բանակը ջախջախվեց, ճապոնական իմպերիալիստների ծրագրերը տապալվեցին։ Սամուրայները ոխակ չարեցին հարձակվել Սովետական Միության վրա։ Բայց ճապոնացիները սովետական սահմանների մոտ երբեք չդադարեցրին թշնամական, պրովոկացիոն գործողությունները։

Սովետական կառավարությունը, հաշվի առնելով մեր երկրի Հեռավոր-Արևելյան սահմաններին սպառնացող ճապոնական վտանգը, այդ սահմանները պահպանելու համար ստիպված էր այնտեղ պահել մեծ քանակությամբ ռազմական ուժեր, որպիսի դրությունը խիստ օգտակար և ձեռնտու էր Հիտլերին։ Այսպիսով, օգնելով իրենց դաշնակից հիտլերյան զավթիչներին, այնուամենայնիվ ճապոնական ռազմամոլները պատրաստվում էին հարմար առիթով հարձակվել Սովետական Միության վրա։

Սովետական Բանակը, ջախջախելով հիտլերյան Գերմանիային և ֆաշիստական զավթիչներին ծունկի բերելով, հարվածն ուղղեց ճապոնական իմպերիալիստներին։ Հարկավոր էր լիկվիդացնել ճապոնական իմպերիալիզմի հարձակման վտանգը դեպի սովետական Հեռավոր Արևելք, դեպի մեր դաշնակից Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկան, օգնել չինական մեծ ժողովրդին և կորեացիներին, նրանց օգնել ազատագրվելու ճապոնական իմպերիալիստների գաղութացման ծանր լծից։

Սովետական Բանակը զենքը շուռ տվեց ընդդեմ ճապոնական ռազմամոլների և սկսեց իր ազատագրական արշավը դեպի Մանջուրիա, Կորեա և Չինաստան։ Սովետական Բանակը օգնություն ձեռք մեկնեց չինական մեծ ժողովրդին, որը դարեր շարունակ անհամար տանջանքների, ճնշման ու շահագործման էր ենթարկվում իմպերիալիստ-գաղութարարների լծի տակ։ Եկավ Չինաստանի բազմամիլիոն ժողովրդին իմպերիալիստական զավթիչների լծից ազատագրելու բաղձալի ժամը։

Սովետական Բանակի հարձակումը ճապոնական սամուրայների դեմ ազատագրական մեծ նշանակություն ուներ նաև հենց իրենց, ճապոնացի աշխատավորների համար, որոնք հեծում էին շահագործողների ֆաշիստական ռեժիմի պայմաններում։ Ճապոնիայի բանվորների և գյուղացիների ոևոլուցիոն շարժումը ճնշվում էր երկրի ռազմամոլ կառավարողների ու ոստիկանական տեռորի միջոցով, իսկ ճապոնական ժողովրդի ազատագրական դեմոկրատական ձգտումների համար պայքարող մարտիկներին բախտ էր վիճակվում բանտային խցիկները, աքսորը, տաժանակրությունն ու կախաղանը։ Հետևաբար, ճապոնական իմպերիալիստական կառավարության և բանակի ջախջախումով Սովետական Բանակն ազատագրական պատմական մեծ գործ էր կատարում ոչ միայն Ճապոնիայի կողմից զավթված կորեական, մանջուրական և չինական բազմամիլիոն ժողովուրդների համար, այլ և հենց իրենց՝ ճապոնացի աշխատավորների համար։

* * *

1945 թ. օգոստոսի 8-ին ՍՍՌՄ-ի Արտաքին Գործերի ժողովրդական կոմիսար ընկեր Վ. Մ. Մոլոտովը հայտարարություն արեց ճապոնական կառավարության Մոսկվայի դեսպանին, որ Սովետական կառավարությունը որոշել է օգոստոսի 9-ից պատերազմ հայտարարել Ճապոնիային։ Այդ հայտարարության մեջ հատուկ կերպով հիմնավորված և շարադրված էին

այն բոլոր պատճառները, որոնց հիման վրա Սովետական կառավարությունն ընդունել էր այդ որոշումը։

Սովետական Միության զինված ուժերի Գերագույն Գլխավոր Հրամանատար Գեներալիսիմուս Ստալինի հրամանով Հեռավոր Արևելքում սովետական զորքերը անցան հարձակման և կործանիչ հարված հասցրին Թշնամուն։

Արևելքում սովետական զորքերի ընդհանուր հրամանատարն էր ստալինյան փորձված զորավար-մարշալ Վասիլևսկին։ Հարձակումը գնում էր երեք գլխավոր ուղղություններով — Անդրբայկալյան, 1-ին Հեռավոր-Արևելյան, 2-րդ Հեռավոր-Արևելյան ռազմաճակատների գործողություններով։ Ծովից Թշնամուն հարվածում էին Խաղաղ օվկիանոսյան նավատորմի և Ամուրի նավատորմիղի ռազմանավերը։ Ճապոնական իմպերիալիստների դեմ մղվող պատերազմին մասնակցում էին Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկայի զորքերը մարշալ Չոյբալսանի հրամանատարությամբ։

Սովետական զորքերը, կտրելով մանջուրական սահմանը, օգոստոսի 9-ին ճեղքեցին ճապոնացիների ամրությունները և օրվա ընթացքում առաջ շարժվեցին 15—25 կիլոմետր։ Մերձծովյան շրջանում սահմանն առաջինն անցավ մայոր Գլազունովի դումարտակը և հարված հասցրեց Թշնամու «Վերբլյուդ» բարձունքի պաշտպանական հենակետին։ Օրվա վերջում սովետական զինվորները արդեն մարտեր էին մղում Պոգրանիչնայա քաղաքի վողոցներում։ Մայոր Յանկևիչի, կապիտան Վոլկովի և Կոմարովի ստորաբաժանումները հաջողությամբ անցնելով ականապատված դաշտով, թևանցում էին Թշնամու ուժեղ ամրացված կրակակետերը և շրջապատման մեջ առնելով դրանց ոչնչացնում։

Սովետական զորամասերը հարձակվում էին բնական դժվարին պայմաններում։ Նրանց առջև փոված էին մանջուրական վայրի տայգան, Տայպինլինի լեռնանցքը, որի երկարությունը հասնում է մինչև հաղարավոր կիլոմետրերի, ճահիճներ, գետեր։ Բոլոր հնարավոր անցուղիները պատված էին ականներով, իսկ ՐՕՏ-երից կրակում էին զենքի բոլոր տեսակները։ Բայց այդ արգելքները չկարողացան կանգնեցնել սովետական զորամասերի հարձակումը։

Հեռավոր-Արևելյան 1-ին ռազմաճակատի զորքերը մարշալ Մերեցկովի գլխավորությամբ ճեղքեցին Թշնամու պաշտպանությունը Տայպինլինի լեռնանցքում։ Կապիտան Աղանովի տանկային դումարտակը մարտերի 10 օրվա ընթացքում կտրեց և անցավ 650 կիլոմետր տերիտորիա։ Սպաներ Աղանովի, Տարասենկոյի և Բարանովի տանկային ստորաբաժանումները Մանջուրիայում ոչնչացրին ճապոնական հետևակի երկու դունդ, գերի վերցրին մի դիվիզիայի ամբողջ շտաբը և ռազմասավար։

Անդրբայկալյան ռազմաճակատների զորքերի առջև փոված էին մոնղոլական անապատները և ապա Մեծ Խինգանի վայրի լեռները։ Մարշալ Մալինովսկու հրամանատարությամբ սովետական զորքերը, հաղթահարելով բնական դժվարությունները և ջախջախելով ճապոնական բանակի կառուցած դիմադրության հենակետերը, առաջին երկու օրում կտրեցին և անցան 40—45 կիլոմետր տարածություն, իսկ օգոստոսի 11-ի օրվա ընթացքում Մեծ Խինգանի լեռնանցքն անցնելուց հետո առաջ շարժվեցին մինչև 80 կիլոմետր։

Այստեղ պետք է հիշել Սուվորովի նշանավոր խոսքերը. «Որտեղով կանցնի եղնիկը, այնտեղով կանցնի նաև ռուս զինվորը, իսկ որտեղով չի կարող անցնել եղնիկը, այնտեղով էլ կանցնի ռուս զինվորը»[1]

Հարձակման առաջին և երկրորդ օրերում սովետական Խաղաղ օվկիանոսյան ռազմա-ծովային նավատորմը ծովակալ Յումաշևի հրամանատարությամբ զրոհեց Կորեայի, Հարավային Սախալինի ափերի և Կուրիլյան կղզիների վրա։ Հանկարծակի զրոհող ծովային հետևակի դեսանտային զորամասերը, ջախջախելով ճապոնական զավթիչներին, վրեժ լուծեցին Լադոգայի համար, ծովակալ Մակարովի համար, Ցուսիմայի և Պորտ-Արտուրի համար։

Ճապոնական իմպերիալիստների բանակները ջախջախելու համար ծավալվող մարտերում սովետական զինվորները ամեն օր, ռազմաճակատի բոլոր հատվածներում, զորքի բոլոր տեսակների մեջ կատարում էին նորանոր հերոսական սխրագործություններ։ Հիշենք օդաչու Միխայիլ Յանկոյին։ Այդ քաջարի ռազմիկը առաջադրանք ստացավ զրոհել Թշնամու նավահանգիստը Կորեայում։ Թշնամու արկը դիպավ նրա ինքնաթիռին և մեքենան սկսեց վառվել։ Յանկոն չկորցրեց իրեն։ Նա, կրկնելով կապիտան Գաստելլոյի սխրագործությունը, վառվող ինքնաթիռը ռումբերի բեռով ուղղեց հակառակորդի զորքի մեծ խմբի վրա, ոչնչացնելով Թշնամու շատ զինվորներ։ Եվ քանի քանիսը Յանկոյի նման գնում էին անձնազոհության, կատարում էին հրամանը և ջախջախում Թշնամուն։

Սովետական զորքերի մի քանի օրում հասցրած հարվածները խորտակեցին սամուրայների պաշտպանության բոլոր բնագծերը և դիմադրության հանգույցները։ Թշնամին պարտության մատնվեց։ 1945 թ. օգոստոսի 23-ին Գերագույն Գլխավոր Հրամանատար Ի. Վ. Ստալինը հրատարակեց պատմական մի հրաման, որում ամփոփված են Սովետական Բանակի մղած մարտերը ճապոնական իմպերիալիզմի դեմ։ Այդ հրամանում ասված է.

«Անդրբայկալյան, Հեռավոր-Արևելյան 1-ին և Հեռավոր-Արևելյան 2-րդ ռազմաճակատների զորքերը, Խաղաղ օվկիանոսյան նավատորմի ռազմանավերն ու զորամասերն օգոստոսի 9-ին սկսեցին մարտական գործողություններ ճապոնական զորքերի դեմ Հեռավոր Արևելքում։ Հրետանային հուժկու կրակի և ավիացիայի հարվածների աջակցությամբ մեր զորքերը ճեղքեցին հակառակորդի երկարատև, խորը էշելոնացված պաշտպանությունը Մանջուրիայի սահմաններում, անցան Մեծ Խինդան լեռնաշղթան, Ամուր, Ուսսուրի գետերը և, զարգացնելով սրընթաց հարձակումը դեպի Մանջուրիայի խորքը, առաջ շարժվեցին 500-ից մինչև 950 կիլոմետր, գրավեցին ամբողջ Մանջուրիան, Հարավային Սախալինը և Սյումյուսյու ու Պարամուշիր կղզիները՝ Կուրիլյան կղզիների խմբից։ Ճապոնական Կվանտունյան բանակը անհաջող հակադրություններից հետո դադարեցրեց դիմադրությունը, զենքը վար դրեց և հանձնվեց մեր զորքերին»։

Սովետական Բանակը կատարում էր իր ազատագրական միսիան Արևելքում։ Մանջուրական, կորեական և չինական ամեն մի քաղաք ու

[1] Кирил Пигарев. Солдат-полководец. стр. 32. 1944 г., Москва.

[2] Գերագույն Գլխավոր Հրամանատարի № 372 հրամանը, 1945 թ. „Правда" 24 օգոստոսի։

գյուղ մտնելիս սովետական զինվորներին դիմավորում էին տանջված ու հալածված աշխատավորները։ Նրանք առաջին անգամ էին տեսնում իսկական ազատարար ժողովրդական բանակի զինվորների, որոնք եկել էին Սովետական Միությունից օգնելու, ազատագրելու իրենց չին, կորեայի եղբայրներին։

Բոլոր օտար պետությունների իմպերիալիստ- գաղութարարները, որոնք մուտք էին գործել այդ երկիրը, սկսած ցարական ջարդարարներից մինչև ճապոնական զավթիչները, անգլիական գաղութարարներն ու ամերիկյան գանգստերները նպատակ ունեին ստրկացնել բազմամիլիոն չին ժողովրդին, գաղութացնել նրա երկիրը, կողոպտել հարստությունները։ Գոմինդանական դավաճաններն էլ ծառայում էին անգլո-ամերիկյան իմպերիալիստներին և նրանց ծախում իրենց երկիրը։

Հանձինս սովետական զինված ուժերի չինացիները և կորեացիները տեսան իրենց ազատարարներին, որոնք գնացել էին ջախջախելու ճապոնական զավթիչներին, ոչնչացնելու նրանց, ովքեր տանջում էին ժողովուրդներին, գնացել էին նոր ուժ հաղորդելու պայքարող չին ժողովրդին, որ նա տապալի իր ուսերին դրված լուծը, դուրս գա դեմոկրատիայի և սոցիալիզմի ուղին, ազատ կյանքի ուղին։

Սովետական ռազմիկները պատմում էին, թե ինչպես էին չինացի մայրերն ուրախության արտասուքներն այտերին դիմավորում իրենց, ինչպես էին ողջունում ազատարար բանակի զինվորներին։ Նրանք իրենց ազգային սովորություններին և առանձնահատկություններին համապատասխան ցերեմոնիաներ էին կատարում, իրենց երախտագիտությունը հանդես բերում դեպի Սովետական Բանակը։

Պատմենք մի փաստ։

Չինների մեջ հնուց տարածված էին շատ առասպելներ և ժողովրդական ավանդություններ։ Դրանցից մեկը վերաբերում է «ժել-Շոնդ»-ին։ «ժել-Շոնդ»-ը մի հազվագյուտ բույս է, որը խորը արմատներ է գցում հողի մեջ։ Չինների այդ «ժել-Շոնդ»-ը նշանակում է «կյանքի արմատը»։ Նա, ով գտնում է «ժել-Շոնը» («կյանքի արմատը»), նրան ժպտում է կյանքը, բախտավորություն, ազատություն։

Չինացին «ժել-Շոնդ»-ը կարող է նվիրել միայն ամենանվիրական մարդուն, իրեն համար ամենամեծ բարություն կատարողին, իրեն թշնամուց փրկողին և ազատ կյանք պարգևողին, որպեսզի նրանց միջև լինի հավիտենական բարեկամություն, որի վրա ե զարգանա ազատ, երջանիկ կյանքը։

Չին կանայք Սովետական Բանակի շատ զինվորներին, սպաներին, գեներալներին նվիրաբերում էին «ժել-Շոնդ»-ը, «կյանքի արմատը»։ Դա չին մոր նվիրաբերությունն է սովետական զինվորին, ռուս զինվորներին, որպես երախտագիտության նշան։[1]

1945 թվականի օգոստոսի 23-ին մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան 324 թնդանոթներից 24 համազարկով ողջունեց Հեռավոր-Արևելյան սովետական փառապանծ զորքերին, որոնք պատմական մեծ հաղթա-

[1] Մոսկվայում Սովետական Բանակի կենտրոնական տան թանգարանի մեծ սրահում դրված ստենդները։

նակ էին նվաճել ճապոնական իմպերիալիզմի դեմ։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը հաստատեց նոր կառավարական պարգև—«Ճապոնիայի դեմ հաղթանակի համար» մեդալ, որով պարգևատրվեցին ճապոնական իմպերիալիզմի ջախջախման համար մղված մարտերին մասնակցող ռազմիկները։

* * *

Ճապոնական իմպերիալիստների դեմ մղված մարտերում Սովետական Բանակի զորամասերի կազմում ռուսների և սովետական մյուս ժողովուրդների զավակների հետ միասին իրենց մասնակցությունն ունեցան նաև հայ ռազմիկները։ Կարելի է բերել ռազմաճակատների տարբեր հատվածներից, զորքի տարբեր տեսակներից և ծառայության բոլոր աստիճաններից օրինակներ այն մասին, որ հայ ժողովրդի զավակներն ինչպես Հայրենական մեծ պատերազմի բոլոր էտապներում, այնպես էլ Հեռավոր Արևելքում մղված մարտերում ակտիվորեն մասնակցում էին թշնամու դեմ մղվող կռիվներին։

Հայրենիքից հեռու, մանջուրական տափաստաններում կամ Մեծ Խինգանի լեռնանցքներում, ինչպես եղբայրական մյուս ժողովուրդների զավակները, նաև հայ ռազմիկները կռիվներին մասնակցում էին նույնպիսի արիությամբ ու քաջությամբ, ինչպես Ստալինգրադի մոտ և Ղրիմում, Ուկրաինայում և Բելոռուսիայում. ամեն մի ռազմիկ լավ էր գիտակցում, որ այդ արդարացի պատերազմը մղվում էր մեր Սովետական Հայրենիքի ոխերիմ թշնամի ճապոնական զավթիչների դեմ։ Արևելքում թշնամու ջախջախման համար հարկավոր էր ուժերի լարում, անձնազոհություն, վճռականություն, անվեհերություն։

Կպատմենք մի քանի էպիզոդներ առանձին զինվորների և սպաների կյանքից, նրանց մարտական գործերից, որով այդ ռազմիկները մասնակից դարձան ճապոնական իմպերիալիզմի դեմ մղվող կռիվներին։

Հիշենք Սովետական Միության Հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Բարսեղովին, սպիտակ ֆինների դեմ մղվող մարտերի հերոսներից և Մոսկվայի պաշտպանության ժամանակ աչքի ընկած քաջարի հրամանատարներից մեկին։ Բարսեղովը հանդիսանում էր հրետանային խոշոր միավորումների հրամանատար։ Երկար ժամանակ նա իրեն ենթակա հրետանային զորամասերը նախապատրաստում էր թշնամուն հարված հասցնելու համար։ Եկավ և այդ օրը, 1945 թվականի օգոստոսի 9-ը։ Ռազմաճակատի մյուս հրետանային միավորումների հետ միասին, Գերագույն Հրամանատարի հրամանով, հարձակման անցան նաև այն հրետանային զորամասերը, որոնց գործողություններին զակավար մասնակցություն էր ունենում գեներալ Բարսեղովը։

Փորձված քաջարի հրետանային գեներալը իրեն ենթակա զորամասերի գործողությունները ղեկավարում էր հմտորեն, հաջողությամբ իրականացնելով բարձր հրամանատարության առաջադրանքները։ Ճապոնական զավթիչների դեմ ձեռնարկած հարձակման առաջին օրվանից մինչև թշնամու լիակատար պարտության օրը Բարսեղովը մարտերի մեջ էր, իր հրետանավորների հետ միասին։ Բարսեղովի կատարած աչքի ընկնող գործողությունների մասին և նրա ղեկավարությամբ գործող հրետանավորների

քաջագործությունները նշված են ընկեր Ստալինի պատմական հրամանում։[1]

Ռազմաճակատի մի այլ հատվածում մղվող մարտերին մասնակցում էր գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, Դնեպրի հերոսներից մեկը։ Նրա ղեկավարած զորամասերը հմտորեն կատարել էին իրենց տրված առաջադրանքները գերմանական ֆաշիստների դեմ մղվող մարտերում։ Հեռավոր Արևելքում Ղազարյանը մարտերում գործադրում էր տարիների կուտակած փորձը և տակտիկական պրիոմները, հասնելով հաջողություններ։ Անդրանիկ Ղազարյանը իր մասնակցած մարտերի մասին գրել է հետևյալը.

«Կնիշեմ Մոնդոն-Դզյան քաղաքի համար մղված մարտերը։ Ճապոնացիներն ուզում էին կազմակերպել այդ քաղաքի պաշտպանությունը։ Դրա համար նրանք քանդել, կործանել էին բոլոր կամուրջները, գրավել էին բոլոր իշխող շենքերը, փորել, կառուցել էին խրամատներ, դիրքեր, սակայն այդ բոլորն անկարող եղան կանգնեցնելու մեր զորքերի առաջ շարժումը։ Ճապոնացիների առաջին փորձը՝ կազմակերպված մարտ մղելու և քաղաքը պաշտպանելու համար ջախջախվեց մեր զորքերի կողմից. հատկապես հրետանին և ավիացիան ճապոնացիների զորքերի վրա այնպիսի ուժի կրակ թափեցին, որ հազիվ թե նրանցից կենդանի մարդիկ մնացին»։[2]

Այսպիսով, ինչպես մյուս միավորումների, նաև Ղազարյանի ղեկավարած զորամասերի հարձակման հատվածում ճապոնացիները, ամրանալով քաղաքում ու բնակավայրերում, ճիգեր էին թափում պաշտպանել իրենց դիրքերը և փակել սովետական զորամասերի ճանապարհը, սակայն սովետական զորամասերի կրակային հզոր հարվածները, ռազմա-տակտիկական բարձր արվեստը քայքայում էին թշնամու պաշտպանությունը և խախտում նրա բոլոր պլանները։

Կներկայացնենք ևս մեկ էպիզոդ Սովետական Միության հերոս Անդրանիկ Ղազարյանի հրամանատարական-մարտական գործունեությունից։

Մարտերը մղվում էին Մուլին քաղաքի շրջանում։ Մուլինը չինական հնագույն քաղաքներից է, որը հարմար դիրքեր ունի պաշտպանվելու համար։ Հրամանատար Անդրանիկ Ղազարյանի զորամասերը երբ հասան Մուլինի հեռավոր մատույցներին, նա հետախույզների մի խումբ ուղարկեց քաղաքը հետախուզելու, թշնամու պաշտպանության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու մասին, մինչև միավորման զորամասերը կմոտենային հարձակման համար։ Հետախույզների խումբը երբ մոտեցավ քաղաքին, թշնամին կատաղի կրակ բաց արեց սովետական ռազմիկների վրա։ Պարզ դարձավ, որ Մուլինը պաշտպանող ճապոնական կայազորը ամրացել է նախօրոք պատրաստված դիրքերում և ամուր կերպով պաշտպանում է դրանք։

Անդրանիկ Ղազարյանը գրոհող ստորաբաժանումների խմբի և ինքնընթաց հրանոթի ուղեկցությամբ առաջ գնաց և թշնամու դիրքերի միջով թափանցեց քաղաքի թաղերը։ Սկսվեց լարված կռիվ Ղազարյանի կողմից անձամբ ղեկավարվող գրոհող խմբի և ճապոնական զորամասի միջև քա-

[1] Գերագույն Գլխավոր հրամանատարի № 372 հրամանը, 1945 թ. 23-ը օգոստոսի, «Պրավդա» 24 օգոստոսի, 1945 թ.։

[2] ՀՊՊԿ-ի արխիվ, գործ 117։

գաքի մեջ։ Վեց ժամ մղվող մարտերի ընթացքում գրոհողները թշնամուն դուրս էին մղում դիրքերից և գրավում նոր փողոցներ, շենքեր, ամբողջ թաղեր։ Գրոհող խումբը շարունակում էր մարտերը, երբ հետևից հասան միավորման մյուս զորամասերը և իրենց կրակային ամբողջ ուժով ճակատից և թևերից սրընթաց հարձակման անցան թշնամու դիրքերի վրա։ Հակառակորդի ուժերը ջախջախվեցին կամ գերվեցին, և Մուլինը ազատագրվեց։[1]

Գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը մասնակցել է նաև Մունդունձին, Դուխուա, Ձիախե, Դիրին քաղաքների և բազմաթիվ բնակավայրերի ազատագրման ժամանակ մղված մարտերին։ Նրա ղեկավարած միավորման ռազմիկների հանդեպ բերած արիությունը և ռազմական հմտությունը նշված են Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամանում։[2]

Նույն միավորման զորամասերից մեկում որպես հրետանու պետ ծառայում էր սպա Արամ Մկրտչյանը։ Երբ զորամասի առջև խնդիր դրվեց հարձակման անցնել ճապոնական զորամասերի պաշտպանության դիծը հենց սահմանի մոտ, զորամասում առաջինը պետք է գործեր հրետանին։ Մկրտչյանը ամբողջ գիշերը անցնում էր մարտկոցից-մարտկոց, ստուգում թնդանոթների վիճակը, ռազմամթերքը, հաշվարկներին հանձնարարություններ էր տալիս, նախապատրաստվում։ Լուսադեմին հրետանային զարկերը ազդարարեցին հարձակման մասին։ Սովետական հրետանավորներն ուղիղ հարվածներով ճնշում էին թշնամու կրակակետերը և ավերելով նրա դիմադրության հանգույցները, ճանապարհ էին բաց անում հետևակի համար։

«Սահմանն անցնելիս իմ հրետանավորները ոչնչացրին մեր հետևակին խանգարող կրակակետերը,—պատմում է Արամ Մկրտչյանը,—հարձակվում էինք լեռնոտ տեղանքում և ճահիճներով։ Թնդանոթներն առաջ տանելու համար չկային հարմար ճանապարհներ։ Սակայն մարտիկները հաղթահարում էին բոլոր արգելքները և թնդանոթներն առաջ էին տանում ճահիճների կամ լեռների միջով։ Ոչ մի օր հրետանավորները կանգ չառան և հետևակից հետ չմնացին։[3]

Մանջուրիայում մղված կռիվների մեջ ակտիվ մասնակցություն ունենալու համար հրետանային սպա Արամ Մկրտչյանին ներկայացրին կառավարական պարգևի՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանի։[4]

Մեկ ուրիշ սպա, Սերյոժա Էյլարյանը իր մարտական ընկերների հետ Արևելյան Պրուսիայում մղած մարտերն ավարտելուց հետո մեկնեց Անդրբայկալյան ռազմաճակատ։ Այնտեղ նա ռուս զինվորների հետ մտավ Տաննան և Զանդոն քաղաքները, տեսավ մանջուրական գյուղերը, կուլիների չարքաշ կյանքը։ Զորամասերն առաջ էին գնում։ Մարտերը փոխադրվեցին Խարբինի շրջանը։ Քաղաքը գրոհող բազմաթիվ ստորաբաժանումներից մեկի կազմում կռիվներին մասնակցում էր նաև Սերյոժան։ Այստեղ հրամանատարությունը նրա մարտական ծառայությունները նշում է կառավարական նոր պարգևով։ Սերյոժա Էյլարյանն ստանում է Գերագույն

[1] ՀՊՊԿ-ի արխիվ, գործ 117։
[2] Գերագույն Գլխավոր Հրամանատարի № 372 հրամանը 1945 թ. օգոստոսի 23։
[3] ՀՊՊԿ-ի արխիվ, գործ 177.
[4] Նույն տեղում։

Գլխավոր Հրամանատարի 7-րդ շնորհակալագիրը և «Ճապոնիայի դեմ հաղթանակի համար» մեդալ։[1]

Մեծ Խինգանի լեռնաշղթան անցնող սովետական զինվորների մեջ էր նաև Տրդատ Պողոսի Խրաշյանը։ Նա մասնակցեց Ցիցկասի, Մուկդին, Դայթին, Խայլար և ուրիշ քաղաքների գրավման համար տեղի ունեցած կռիվներին։[2]

Մեծ Խինգանի լեռնաշղթան անցնելիս և հատկապես Խալնարշանյան պաշտպանական շրջանում մղվող կռիվների ժամանակ մարտական նոր սխրագործություններ կատարեց Զավեն Հովհաննիսյանը։ Այդ երիտասարդ ռազմիկը դեռ նոր էր ապաքինվել ստացած վերքից, երբ զորամասը խնդիր ստացավ մեկնել Հեռավոր Արևելք։ Չմոռանալով իր ուժերը, Զավենը Խայլար կայարանը գրավելու ժամանակ գրոհիչ խմբերից մեկի կազմում առաջինների հետ գնում էր մարտի, ավտոմատով և նռնակներով հարվածելով թշնամուն։ Այդ կայարանի գրավման ժամանակ աչքի ընկնելու համար Զավեն Հովհաննիսյանը պարգևատրվեց Կարմիր Աստղի շքանշանով։ Զավենին վիճակվեց մասնակից լինել նաև Պորտ-Արտուրի ազատագրման համար մղված կռիվներին։[3] Հակառակորդի ջախջախումից հետո, իր մարտական ծառայությունը կատարելու պահին Հովհաննիսյանը ենթարկվեց անկյունից դարանակալած թշնամու հարձակմանը և ծանր վիրավորվեց։[4]

Հեռավոր-Արևելյան 1-ին ռազմաճակատի զորքերի մարտակարգերում կռվող միավորումներից մեկի հրամանատար գնդապետ Բագրատ Միտոյանին մենք առաջին անգամ հանդիպեցինք 1943 թվականին, Արարատյան դաշտում պահեստային զորամասերի ռազմական ուսուցման ժամանակ։ Նա դժգոհում էր իր վիճակից, որ ռազմաճակատում չէր, պայմանական «հակառակորդի» վրա էր «գրոհում»։ «Ճանձրալի է,—գանգատվում էր Միտոյանը,—սպասել, թե երբ կհասնի հերթը»։

Շուտով հերթը հասավ։ Միտոյանը մեկնեց ռազմաճակատ և նրա ղեկավարած զորամասերը Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերի կազմում անցնում են Կարպատները, մասնակցելով չեխոսլովակյան մի քանի քաղաքների ազատագրման համար մղված մարտերին։ Գնդապետ Միտոյանի զորամասերի հմուտ գործողությունների մասին նշվեց Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամանում Մայիսի 9—10-ին. ֆաշիստական Գերմանիայի կապիտուլյացիայից հետ էլ Միտոյանի զորամասերին վիճակվեց մարտեր մղել Չեխոսլովակիայում դեռևս գիմադրող ֆաշիստական ավազակների դեմ, հաջողությամբ կատարելով ճակատի հրամանատարության առաջադրանքը։

Այնուհետև Միտոյանը մեկնում է Հեռավոր Արևելք։ Այնտեղ Միտոյանի զորամասերը ճակատի զորքերի հետ հարձակման անցան և մասնակից դարձան ճապոնական ավազակների դեմ մղվող կռիվներին։ Կարպատներում ձեռք բերած փորձը օգնում էր Միտոյանին հմտորեն ղեկավարել

---

1 ՀՊՊԿ-ի արխիվ, տես Ս. Էյլարյանի գործը։
2 ՀՊՊԿ-ի արխիվ, գործ № 93։
3 ՀՊՊԿ-ի արխիվ, գործ № 49։
4 Նույն տեղում։
5 Գերագույն Գլխավոր Հրամանատարի № 359 հրամանը, 30 ապրիլի, 1945 թ.։

ստորաբաժանումների օպերատիվ գործողությունները, կատարելու իրեն տրված առաջադրանքները։

Ճապոնական զավթիչների կապիտուլյացիայից հետո Միտոյանի զորամասերը փոխադրվեցին Զուկոտյան թերակղզին։ Այստեղ Միտոյանը ընտելացավ մեր Հայրենիքի Հյուսիս-Արևելյան ծայրամասի ցրտաշունչ կլիմային և պատվով կատարում էր իր ծառայությունը։[1]

Ճապոնական զավթիչների ջախջախման համար մղված մարտերում աչքի ընկած սպաների շարքում ընկեր Ստալինի հրամանում հիշատակված են նաև գնդապետ Օգանեզովի, գնդապետ Հայրապետյանի և գնդապետ Հարությունյանի անունները։ Օգանեզովը իր հետևակայինների հետ միասին, Հայրապետյանը և Հարությունյանը իրենց հրետանավորների հետ միասին Հեռավոր Արևելքում մղվող մարտերում պատվով կատարեցին իրենց առաջադրված խնդիրները և արժանացան Գերագույն Գլխավոր Հրամանատար Ի. Վ. Ստալինի շնորհակալությանը։[2]

* * *

Այսպիսով, Հեռավոր Արևելքում գործող զորքերի բոլոր տեսակների մեջ, ծառայության տարբեր աստիճաններում Հայաստանի զավակները ակտիվորեն մասնակցեցին ճապոնական իմպերիալիստների դեմ մղվող կռիվներին։ Հայ ռազմիկները ռուսներից և սովետական մյուս եղբայրական ժողովուրդների զավակներից անբաժան էին Մեծ Խինգանի լեռներում, մանջուրական անապատներում, չինական բազմամարդ քաղաքների փողոցներում մղված մարտերի մեջ։

Բոլշևիկյան պարտիայի կողմից դաստիարակված սովետական բազմազգ զինվորներից ամեն մեկը ձգտում էր նոր, առավել աչքի ընկնող սխրագործություններ կատարել, հարստացնել սովետական զենքի փառքը, բարձրացնել իր ժողովրդի պատիվը։

Հայ զեներալները, սպաները և զինվորներն այդ պայքարի բոլոր էտապներում գտնվեցին սովետական զինվորի բարձրության վրա և արժանի եղան իրենց կոչմանը։ Նրանք իրենց մարտական եղբայրների հետ միասին ճապոնական իմպերիալիզմի դեմ մղվող մարտերին մասնակցեցին նույնպիսի արիությամբ, քաջությամբ և ռազմական հմտությամբ, ինչպես գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերում։

Ар. Мнацаканян

## Бои Советской Армии против японских захватчиков и участие воинов-армян в этих боях

### Резюме

Империалистическая Япония была злейшим врагом народов Советского Союза и всего прогрессивного человечества.

Идеология японских империалистов—это идеология самураев. Япон-

1 ՀՊՊԿ-ի արխիվ, գործ № 87։

2 Գերագույն Գլխավոր Հրամանատարի № 372 հրամանը, 23 օգոստոսի, 1945 թ.։

ские самураи проповедовали, что японцы призваны господствовать над народами всего мира.

Руководствуясь этими бредовыми «идеями», японские милитаристы ставили перед собою цель захватить Китай, Корею, Советский Дальний Восток и Сибирь, а затем весь мир.

В 1904 г. японские милитаристы захватили Южный Сахалин и утвердились на Курильских островах. После установления советской власти японцы не раз нападали на нашу советскую страну с целью расчленения и захвата ее частей.

В годы разбойничьей войны германских фашистов против Советского Союза империалистическая Япония сосредоточила огромные вооруженные силы на советских границах с целью вторжения в нашу страну. Разгромив гитлеровские армии, советские вооруженные силы развеяли в прах сумасбродную программу японских милитаристов.

После разгрома фашистской Германии Советский Союз, приступая к осуществлению своей освободительной миссии в Восточной Азии, повернул оружие против Японии для ликвидации японского империализма.

8-го августа Правительство СССР поставило в известность японское правительство, что Советский Союз с 9-го августа объявляет войну Японии. 9-го августа Советская Армия по приказу Генералиссимуса И. В. Сталина перешла в наступление. Боевыми действиями советских войск на Дальнем Востоке руководил испытанный сталинский полководец маршал А. М. Василевский.

Сокрушительные удары Советской Армии наголову разбили силы квантунской разбойничьей армии. Империалистическая Япония была поставлена на колени.

В рядах Советской Армии, под руководством великого русского народа, в боях против японских захватчиков сражались сыны всех братских народов Советского Союза, проявляя при этом героизм, отвагу, храбрость и самоотверженность.

Воины-армяне, бок о бок с русскими воинами и сынами других братских народов активно участвовали в борьбе против японских империалистов.

В боях отличились: генерал-лейтенант артиллерии М. Барсегов, который умело руководил боевыми действиями вверенных ему артиллерийских частей. Герой Советского Союза генерал майор А. Казарян совместно с русскими боевыми друзьями участвовал в освобождении многих населенных пунктов и городов, проявляя при этом новые примеры личного героизма.

Артиллерийский офицер Арам Мкртчян, офицеры Сережа Эйларян, Трдат Храшян и многие другие за боевые подвиги были награждены боевыми орденами.

Рядовой солдат Завен Оганесян самоотверженно участвовал в боях за освобождение Порт Артура. Успешно выполнил все задания командования полковник Баграт Митоян.

В приказе Верховного Главнокомандующего Генералиссимуса И. В. СТАЛИНА от 23-го августа 1945 г. отмечены отличные действия славных сынов армянского народа полковников Айрапетяна, Оганесяна, Арутюняна, которые с честью выполнили боевые задания командования и удостоились благодарности Великого Сталина.

Таким образом, как на фронте борьбы с немецкими захватчиками, так и в борьбе против японских империалистов сыны армянского народа в боевой дружбе с русскими воинами и сынами других народов СССР проявили образцы героизма и отваги, еще раз показав свою беспредельную преданность социалистической Родине.